



**«Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն»
համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Սիսիանի համայնքի թիվ 1
նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային
կազմակերպությանը**

ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
(կազմված է 15.06.2023թ. և բաղկացած է 3 թերթից)

ք. Սիսիան

15.06.2023թ.

«Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը (պետական գրանցման համարը՝ 88.210.01076)՝ ի դեմս տնօրեն Հասմիկ Իվանյանի, որը գործում է ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը (պետական գրանցման համարը 88.210.00891)՝ ի դեմս տնօրեն Արուս Գասպարյանի, որը գործում է ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքում են սույն ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ առ այն, որ.

1. Պայմանագրի կողմերը.
 - 1.1 «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17.03.2011թ., գրանցման համարը՝ 88.210.01076, վկայականը՝ 03Ա078720, ՀՎՀՀ՝ 09811649, գտնվելու վայրը՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Սառնակունք):
 - 1.2 «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 01.03.2006թ., գրանցման համարը՝ 88.210.00891, վկայականը՝ 03Ա071185, ՀՎՀՀ՝ 09413585, գտնվելու վայրը՝ ՀՀ ք. Սիսիան, Սիսական 17):
2. «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը վերակազմակերպել «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը միացման ձևով:
3. Միացման ձևով վերակազմակերպման կարգը և պայմանները.

Միացման ճանապարհով վերակազմակերպված «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի գործունեության դադարման պետական գրանցումից հետո մեկամսյա ժամկետում Սիսիանի համայնքի ղեկավարի 2023թ. հունիսի 15-ի թիվ 037-Ա որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն՝ «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը հանձնում է, իսկ «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ն ընդունում է միացող կազմակերպության առկա հիմնական և շրջանառու միջոցները, այլ գույքը, դրամական մնացորդը, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները:

Հանձնում-ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

«Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը վերակազմակերպված է համարվում՝ նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:

4. Սույն պայմանագրի կողմերը պարտավորվում են իրականացնել միացման գործընթացի հետ կապված հետևյալ գործողությունները.
 - 4.1 սույն պայմանագրի ստորագրման պահից հետո 60 օրվա ժամկետում պայմանագիրը ներկայացնել Սիսիանի համայնքի ղեկավարի հաստատմանը,
 - 4.2 սույն պայմանագրի ստորագրման պահից հետո 30 օրվա ժամկետում վերակազմակերպման մասին սահմանված կարգով տեղեկացնել բոլոր պարտատերերին,
 - 4.3 սույն պայմանագրի ստորագրման պահից հետո 60 օրվա ժամկետում կազմել միացող կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը և ներկայացնել Սիսիանի համայնքի ղեկավարի հաստատմանը:
5. Սույն պայմանագրի ստորագրումից հետո կողմերն իրավունք չունեն կատարել գույքի օտարման գործարքներ՝ առանց Սիսիանի համայնքի ղեկավարի գրավոր համաձայնության:
6. Վերակազմակերպման արդյունքում ընդլայնված «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում շահույթը (պարտավորությունների նկատմամբ պատասխանատվության չափը) տնօրինվում է նրա կանոնադրությամբ սահմանված կարգով՝ առանց հաշվի առնելու շահույթի ստացման (վնասների գոյացման, պարտավորությունների առաջացման) աղբյուրները և ժամկետները:
7. «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը պատասխանատվություն է կրում իրեն միացող «Սառնակունքի համայնքի նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ-ի պարտավորությունների համար:
8. «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը հանդիսանում է միացող «Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի իրավահաջորդը: